



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Հ Ա Ն Հ  
Ա Ռ Շ Ո Ղ Վ Ո Մ Ա Տ



ԲԺ. ՄԵԼԻՔՅԱՆ Ս.

Կ Ա Ր Մ Ր Ո Ւ Կ

ԱՌՇՈՂՎՈՄԱՏ \* 193 \* ՅԵՐԵՎԱՆ





Պետերբուրգի Տղարան  
Գրավիտ 6934 (բ)  
Պատվեր 5252  
Տիրաժ 4000

## Ի՞նչ է ԿԱՐՄՐՈՒԿԸ

Կարմրուկը յերեխաների վարակիչ հիվանդութիւնն է, թեև յերբեմն հիվանդանում են նաև մեծերը:

Յերեխաների հիվանդութիւնների մեջ ամենից շատ տարածվածը կարմրուկն է. նա այնքան հաճախ է պատահում, վոր հասարակութեան մեջ կա մի կարծիք՝ թե բոլոր յերեխաներն ել պետք է անպատճառ հիվանդանան. և իրոք, չկա մի մարդ, վոր յերեխա հասակում հիվանդացած չլինի կարմրուկով:

Կարմրուկը կոչվում է վարակիչ այն պատճառով, վոր անցնում է հիվանդից առողջին, այսինքն՝ առողջը վարակվում է հիվանդից:

Կարմրուկը, ինչպես և մյուս վարակիչ հիվանդութիւնները, ունի իր մանրէն, վորը մինչև այժմօ չի գտնված: Չնայած դրան, մենք լավ դիտենք, վոր կարմրուկի մանրէն անցնում է հիվանդից առողջին՝ ողի միջոցով, հիվանդի հետ շիման միջոցով, հիվանդի գործածած իրերի միջոցով. հայտնի չէ մեզ, վոր կարմրուկի մանրէն անցնում է հիվանդից առողջին մի ուրիշ անձի միջոցով, վորը կարող է առողջ մնալ, բայց տալիս է հիվանդութիւնն ուրիշին: Կարմրուկի մանրէի մասին դիտենք և այն, վոր նա շատ արագ տարածվում է, բայց և շատ հեշտ վոչնչանում է. այդ և պատճառը, վոր կարմրուկով հիվանդների անշակը մաքրելու համար, կարիք չկա խիստ ախտահանութեան, ինչպես անում ենք այդ բուժելի դեպքում. բա-



վաղան և միայն ողափոխել հիվանդի տենչակը և դրանով արդեն վոչնչացրած կլինենք կարմրուկի մանրեները: Մի անգամ հիվանդացողը կարմրուկով, յերկրորդ անգամ այլևս չի հիվանդանա, թեև բացառութիւններ պատահում են, հիվանդանում են վոչ միայն յերկրորդ, այլև յերրորդ անգամ:

### Ի՞նչ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԻ ԿԱՐՄՐՈՒԿԸ

Կարմրուկի գլխավոր նշաններն են՝ ջերմ, աղիքների ու շնչառութեան դործարանների վերին մասերի գոտ (կատար), հետո կարմիր բծեր և մանր թեփ:

Վարակիվածն իսկույն չի հիվանդանում: Ինչպես տերիչ վարակիչ հիվանդութիւնները, այնպես էլ կարմրուկն ունի դադանի շրջան. այսպես և կոչվում վարակման և հիվանդութեան առաջին նշանների յերկվման ժամանակամիջոցը: Քա՞նի որ և տեղում այդ ժամանակամիջոցը. հետադարձութիւնները ցույց են տվել, վոր կարմրուկի դադանի շրջանը տեղում և մոտավորապես 13 օր կամ մի օր ավել, մի օր պակաս:

Հասարակութեան մեջ կա կարծիք, վոր հիվանդութիւնն սկսվում և տաքացնելուց հետո. դա սխալ է. հիվանդը վարակվել է 13 օր առաջ և կարմրուկի մանրեյի համար 13 օր է հարկավոր, վոր հիվանդի մարմնի մեջ գարգանա, առ թույն, թունավորի հիվանդին և հիվանդացնի:

Փաղտնի շրջանն անցնելուց հետո, հիվանդն սկսում է տաքացնել. տաքութիւնը լինում է շատ բարձր. միևնույն ժամանակ հիվանդ յերեխայի աչքերը կարմրում և ուռչում են, նա լուսայի վախենում է. հիվանդի բուրդը կարմրում է, գլուխը ցավում և հիվանդը հարուստ

է, դնալով ջերմը աստուկանում է. այս տեսակ դրութիւնը տեղում է 3-4 օր: Այս բոլոր նշանները կոչվում են կարմրուկի նախնական նշաններ: Յեթե այդ օրերին բաց անեք յերեխայի բերանը, կտեսնեք, վոր հիվանդի քեմքի, նրա բիւի վրա կան կարմիր մանր բծեր: Այս բծերն այնքան բնորոշ են, վոր միայն հենց նրանց հիման վրա կարելի չե ասել, վոր յերեխան հիվանդ և կարմրուկով: Այնուհետև մի քանի օր անցնելուց հետո սկսվում է արդեն դուրս տալը: Հիվանդի մարմնի վրա դուրս են տալիս մանր, կորեկի հատիկի մեծութեան կարմիր բծեր, վորոնք սկզբում մի քանի հատ են լինում. բծերն սկսվում են դեմքից: Առաջին օրը բծերը բոնում են ամբողջ դեմքը. աչքերը լցված են, կարմրում է դեմքը, քիչ ուռած, կարմրած, տաքութիւնը բարձր, լուսայի խուսափող: Ահա կարմրուկով հիվանդի տեսքն առաջին օրը: Յերկրորդ օրը բծերը յերեկում են մարմնի, ձեռքերի և վոտների վրա. յերրորդ օրը, հիվանդանալու սկզբից յոթերորդ օրը, ջերմն իջնում է, դեմքի վրայի բծերն սկսում են դուրսափել, բայց մարմնի, ձեռքի ու վոտների վրա դեռ ուժեղ են: Հենց վոր դեմքի վրայի բծերը դուրսափել են սկսում, անցնում են և աչքերի կարմրութիւնը, գլխացավը, հարց փափկում է, հիվանդն սկսում է աստիճանաբար դեպի լավը գնալ և ասողջանում է:

Այս բոլորից հետո, հիվանդի մաշկն սկսում է թեփոտել. թեփն ամենից շատ յերևում է դեմքի վրա, իսկ մարմնի վրա յերբեմն չի յել յերեկում. թեփոտումը տեղում է 5-7 օր:

Կարմրուկի թեփը շատ մանր է լինում. քութեղից առաջացած թեփի սխալ մեծ-մեծ կտրներով չի լինում:



Այսպես եւ ընթանում սովորական կարմրուկը. յերբեմն էլ կարմրուկն ընթանում եւ շատ թեթեւ. կարմրուկով հիվանդը ջերմ չի ունենում, բացակայում են բժեբը. բայց այդ տեսակ դեպքերը շատ սակալ են լինում: Շերբ աննկատելի յեն անցնում ջերմը և բժեբը, հիվանդին շրջապատողները կարծում են, թե հիվանդը ապաքություն չի ունեցել, կամ բժեբ չեն յեղել:

Բացի կարմրուկի թեթեւ տեսակից, պատահում եւ ծանր տեսակը. բոլոր նշաններն ուժեղ են լինում, հիվանդությունը տեւում եւ յերկար, ընթանում եւ ծանր, հիվանդին բալական վտանգ եւ սպառնում: Ծանր դեպքերը հաճախ տալիս են բարդություններ, վորոնք և շատ անդամ պատճառ են դառնում հիվանդի մահացան:

#### ՎՈՐՈՆՔ ԵՆ ԿԱՐՄՐՈՒԿԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետք եւ ասել, վոր կարմրուկի բարդություններն առաջ են գալիս, բացի հիվանդության ծանրությունից և այն ժամանակ, յերբ հիվանդն սպրում եւ առողջապահական խիստ վատ պայմաններում. բարդությունների պատճառը կարող եւ լինել նաև հիվանդի վատառողջ կազմվածքը. մինչդեռ մեղանում բարդությունների պատճառը համարում են մրսելը:

Կարմրուկի բարդությունները յերբեմն այնքան թեթեւ են լինում, վոր շատ շուտ անցնում են, նույնիսկ առանց բժշկության, բայց և հաճախ ընթանում են նրանք ծանր և կարիք եւ լինում դիմելու բժշկի ոգնության:

Ահա այդ բարդությունները.—

1. Արյունահոսություն քթից. դա լինում եւ մար-

մընի դուրս առաջ առաջ, կամ բժեբի հետ միաժամանակ. արյունահոսությունը յերբեմն լինում եւ մի անգամ և առանց բժշկական ոգնության կարող եւ անցնել: յեթե նույնիսկ արյուն շատ դնա. բայց յերբեմն քթից արյուն եւ հոսում տնընդհատ և այդ տեսակ արյունահոսությունը յերբեք չի կարելի դադարեցնել տնային միջոցներով, հարկավոր եւ դիմել բժշկին:

2. Լնդերքի խոցոտումը. Կարմրուկի միջոցին սովորական բան եւ բերանից վատ հոտ դալը, լեզվի փառով ծածկվելը. բայց յերբեմն լնդերքը բորբոքվում են, ուռչում են, լցվում են արյունով, տեղի յե ունենում արյունահոսություն և խոցավում են յեղերբը: Այդ ժամանակ հիվանդի բերանից շատ վատ հոտ եւ գալիս և ընդերքի խոցոտումը դնալով շատանում եւ: Դրա հետեւանքը լինում եւ այն, վոր ատամները թափվում են, ծնոտի մի մասը կարող եւ փթել, բայց յերբեմն փթումն անցնում եւ այտի վրա և հիվանդի այտը (թուշը) ներսից սկսում եւ փթել, վորից այտի մի մասը թափվում եւ, յերեմվում եւ բերանի խոտչը:

3. Լուծ.—Կարմրուկով հիվանդները հաճախ լուծ են ստանում. սկզբում հիվանդը դուրս եւ գնում որական Յ անգամ, ունենում եւ ջրալի կղկղանք. յերբեմն էլ արյունը միանում եւ կղկղանքին և հասարակ լուծը դառնում եւ արյունալից՝ նրոցով. այդ տեսակ արյունալուծը շատ վտանգավոր եւ, վորովհետև շատերը մեռնում են վոչ այնքան կարմրուկից, վորքան այդ արյունալուծից:

Լուծը սովորական բան եւ կարմրուկի միջոցին. այդ պատճառով էլ շատ բժիշկներ խորհուրդ չեն տալիս լուծողական տալ կարմրուկով հիվանդին, մինչև



անդամ այն ժամանակ, յերբ հիվանդն ունի փորկապություն:

4. Ենչառության գործարանների բորբոքումներ՝ կոկորդի, ցնցուղների և թոքերի: Վերն արդեն ասացինք, վոր կարմրուկի միջոցին սովորական բան է շքնառության գործարանների դումը, այսինքն՝ կատաբրը. առաջանում է կարմրություն, զրդուված դրություն, հաղ: Բայց յերբ բորբոքվում են, այն ժամանակ վտանդն ավելի յե մեծանում, վորովհետև շքնառության ուղիների բորբոքումները հաճախ մահով են վերջանում. որինակ՝ կոկորդի բորբոքումը յերբեմն այնքան ուժեղ է լինում, վոր հիվանդը շնչհեղձ է լինում: Կոկորդի բորբոքման նշաններն են՝ հիվանդի ձայնը խոպոտում է, հատ-հատ հազում է, բայց յերկար, այսպես ասած «չան հաչոցի» նման, ունի շքնառդեղելություն: Քանի հիվանդի ձայնը մաքուր է, ունի միայն հազ և շնչարդեղելություն, կոկորդի բորբոքումն այնքան էլ վտանգավոր չէ, բայց յերբ հաղին ու շքնառդեղելությանը միանում է ձայնի խոպոտությունը, այն ժամանակ հիվանդին լուրջ վտանգ է սպառնում:

Նման դեպքում սպասելի յե, վոր հիվանդի կոկորդը հանկարծ բուրբոքվին բռնվի և հիվանդը շնչհեղձ լինի:

Ցնցուղների բորբոքումը սկզբում վտանգավոր չէ, մանավանդ 5-ից բարձր տարիք ունեցողների համար, բայց մինչև 2 տարեկանների համար, ցնցուղատապը վտանգավոր է, առավել, յերբ բորբոքվում են ամենամանր ցնցումները, իսկ ծծկեր մանուկների համար ցնցուղատապը միանգամայն մահացու յե: Ցնցուղատապի ժամանակ հիվանդը կապտում է, դուռնալում,

ձեռքը, վորոքը ուռչում, արագ է շնչում, մնում է ուշադնաց, մինչև վրա յե հասնում մահը: Բայց ամենից շատ վտանգավորը թոքերի բորբոքումն է. մի բարդություն, վոր շատ հաճախ է պատահում կարմրուկի միջոցին:

Թոքերի յերկու տեսակ բորբոքում է լինում կարմրուկի ժամանակ, մեկը կարճատև, ուժեղ տաքությամբ և արագընթացով, իսկ մյուսը՝ թեթև տաքությամբ, բայց դանդաղ ու յերկարատև: Յերկու տեսակ բորբոքումներն էլ վտանգավոր են հիվանդի համար, մանավանդ շատ փոքր յերեխաների: Այս հարցում շատ մեծ նշանակություն ունի այն, թե ինչ պայմաններում է ապրել հիվանդ յերեխան մինչև հիվանդանալը և ինչ պայմաններում է դտնվում նա հիվանդ վիճակում:

Առհասարակ կարմրուկի բարդությունները, ինչպես վերն ասացինք, առաջանում են այն հիվանդների մոտ, վորոնք ապրում են առողջապահական վատ պայմաններում. այսինքն՝ վորոնց բնակարանը խոնավ է, մութն է, նեղվածք է, լավ ողափոխություն չունի, անբավարար են սնվում, — խնամքից զուրկ են, ի ծննվատառողջ են և ամուր կազմվածք չունեն: Կարմրուկի միջոցին առաջացած թոքերի բորբոքումն ամենից առաջ և ամենից շատ հարվածում է այս տեսակ յերեխաներին, նրանք տալիս են մահացության մեծ թվեր: Փոխեցեք կենցաղի պայմանները, բարդություններ չեն լինի, յեթե լինեն էլ, թեթև կացնեն և մահացու չեն լինի:

Կարմրուկի ամենատարածված բարդություններից մեկն էլ միջին ականջի բորբոքումն է. հիվանդի ականջը ցավում է, նա լավ չի լսում, մի քանի օրից հետո



Քմբակաթագանթը պատուվում է և սկսում է թարախ  
հոսել: Թարախահոսութունը տեղում է մի քանի ոք  
և անհայտանում է հիվանդի առողջանալուց հետո: Ար-  
տողութունն էլ վերականգնում է. բայց յերբեմն բոր-  
քաբուժը միջին ականջից կարող է անցնել գլխի ուղեղի  
պատայաններին, վորը մահացու յե յերևալի համար:

### ՀԻՎԱՆԴԻ ԽՆԱՄՔԸ

Կարմրուկը լուրջ հիվանդութունն է. շատ են սը-  
խալվում նրանք, վորոնք կարմրուկը համարում են  
հասարակ հիվանդութուն և թողնում են հիվանդին  
անխնամ. դա տղիտության հետեւլանք է և այդ տղի-  
տության կամ անղիտակցության համար չարաչար  
տուժում են հիվանդները: Կարմրուկն ամեն անգամ էլ  
թեթև չի անցնում. հաճախ նա ընթանում է ծանր և  
տալիս է զանազան բարդութուններ, վորոնք մահվան  
պատճառ են դառնում:

Կարմրուկի բժշկութունը թողնում ենք բժշկին,  
վորովհետև, նախ՝ այս գրքույկի նպատակը չե բժշ-  
կութունը. և յերկրորդ՝ ամենքի կարմրուկն էլ միա-  
տեսակ չի լինում և միատեսակ չի ընթանում. ինչքան  
հիվանդ, այնքան էլ կարմրուկ. պետք է բժշկել կար-  
մրուկով հիվանդին և մի կարմրուկը, վորքան էլ զը-  
րենք բժշկության ձեվի մասին, միևնույն է, ընթեր-  
ցողն ի վիճակի չի լինի ոգտվել հիվանդ յեղած դեպ-  
քում, ուստի ավելի լավ է և ավելի ոգտակար իմանալ,  
թե ինչպես պետք է խնամել հիվանդին:

Մեզանում մի վատ սովորութուն կա, դա կար-  
մրուկով հիվանդի սենյակը մթության մեջ պահելն է.  
Ծածկում են պատուհանները վարագույրով, մուգ կը-

տորներով, վոր լույսը չանցնի սենյակ. հիվանդն աչ-  
քերի լցված ու կարծրած լինելու պատճառով չի կա-  
րողանում նայել լույսին, դրա համար էլ հիվանդին  
խնամողները, իբր թե, հիվանդի աչքերը խնայելու հա-  
մար, մթնացնում են սենյակը: Սա սխալ է. հիվանդին  
պետք է պառկեցնել լույսին հակառակ, այնպես, վոր  
լույսը չընկնի նրա աչքերին. սա բավական է պաշտպա-  
նելու հիվանդի աչքերը, իսկ սենյակի մթնացնելը վոչ  
թե միայն ավելորդ բան է, այլ նույնիսկ վնասակար:

Վարակիչ հիվանդութունների մանրենները լույսից  
մխախտում են, վորչնչանում. կարմրուկի մանրեններն էլ  
նույնպես. նրանք ավելի շուտ վորչնչանում են լուսա-  
վոր սենյակում և ընդհակառակը՝ ավելի յեն ասլրում  
մթության մեջ: Դիտողութունները ցույց են տվել,  
վոր մութ սենյակում կարմրուկն անհամեմատ ծանր է  
ընթանում և ավելի շուտ է բարդութուններ տալիս,  
քան լուսավոր սենյակում: Կան մայրեր, վորոնք հի-  
վանդի սենյակի պատուհանները ծածկում են կարմիր  
վարագույրով. դա յեւ ավելորդ է և վոչ մի նշանա-  
կութուն չունի հիվանդության ընթացքի համար:  
Չպետք է մոռանալ, վոր արեղակի լույսը, նրա ճառա-  
դայթներն ավելի լավ են ախտահանում կարմրուկով  
հիվանդի սենյակը, քան զանազան դեղեր ու ճարեր.  
Վոչ մի վարագույրով չպետք է խանդարել արեղակի  
ճառագայթների կամ լույսի մուտքը հիվանդի սեն-  
յակը:

Կա մի վատ սովորութուն էլ, կարմրուկն այնքան  
թեթև հիվանդութուն են հաշվում, վոր հաճախ վոտի  
վրա յեն պահում հիվանդին. ավելին կառենք, հաճախ  
թույլ են տալիս նրանց տնից դուրս գալու և ուրիշ յե-



րեխաների հետ խաղալու: Սա նույնպէս սխալ է: Ինչ-  
քան ել թեթեւ լինի կարմրուկը, վոչ վոք չգիտե թե  
վաղն ինչ կարող է պատահել հիվանդին, վոչ վոք չգի-  
տե, թե հիվանդութունը մինչեւ վերջն ել թեթեւ  
կանցնի<sup>օ</sup>, թե<sup>օ</sup> կծանրանա. նմանապէս վոչ վոք չգիտե,  
թե վաղը բարդութուն կտա<sup>օ</sup>, թե<sup>օ</sup> վոչ, կամ ի՞նչ տե-  
սակի բարդութուն կլինի, վո՞ր դործարանի մէջ կլինի  
բարդութունը, ի՞նչպէս կընթանա բարդութունը և  
ի՞նչ տեսակ հետեւանք կարող է ունենալ վերջի վերջո  
այդ բարդութունը:

Այս տեսակետից հիվանդի ամենադիտար խնամքն  
է լինելու՝ պառկեցնել նրան և պահել անկողնու մեջ  
մինչեւ տաքության իջնելը և թեփի վերջանալը: Յեր-  
բմն տաքութունը տեւում է 1-2 օր, դա չի նշանա-  
կում, վոր հիվանդութունն անցավ և ուրեմն կարող է  
հիվանդը չտառեկել և տնից դուրս գալ. հենց այդ տեսակ  
դեպքերին է պատահում բարդութունը, հենց այդ տե-  
սակ դեպքերի համար է ասած՝ «կարմրուկը ներս ձը-  
ղեց», «կարմրուկը կրկին արեց»: Ինչ ասել կուզի, վոր  
այս խոսքերն ավելորդ դրուցյներ են. վոչ թե «կրկինեց»  
կամ «ներս ձղեց» կարմրուկը, այլ շեղվեց իր բնական  
ընթացքից, ծանրացավ, հիվանդի շրջապատողներին  
անսխալության շնորհիւ, հիվանդի անխնամ մնալու  
համար:

Յերբ տանը կա կարմրուկով հիվանդ, լավ է սե-  
նյակում մնա միայն հիվանդն ու նրա խնամողը. ով  
չունի այդ հնարավորութունը, ավելի լավ է տեղափո-  
խել հիվանդին հիվանդանոց. յեթե տանն են պահում  
հիվանդին, պետք է շուտ-շուտ և կանոնավոր կերպով  
աչափութեն հիվանդի սենյակը, մաքրեն հիվանդին, վո-  
խեն և ուղղեն անկողինը:

Հիվանդին պետք է տալ ուտելու համար թեթեւ  
կերակուրներ, իսկ խմելու համար կաթ, թեյ և մա-  
քուր ջուր: Առանց բժշկի խորհրդի, չլողացնել հիվան-  
դին և չտալ վոչ մի դեղ. պետք է ամեն կերպ աշխա-  
տել վոր բարդութուններ չառաջանան, իսկ բարդու-  
թյունների դեպքում անսխալաւ գիմել բժշկին և ա-  
ռանց նրա խորհրդի վոչ մի քայլ չանել:

Առողջ կազմվածք ունեցող յերեխաների կարմրու-  
կը, առողջապահական լավ պայմաններում ապրող  
յերեխաների կարմրուկը, թեթեւ է անցնում, բարդու-  
թյուններ չի տալիս. բայց անսխալ վարվելուց, հի-  
վանդին լավ ջնամելուց կարմրուկն ել կարող է ծանր  
ընթացք ընդունել, կարող է բարդութուն տալ և վնա-  
սել հիվանդին:

Չպետք է մոռանալ, վոր կարմրուկով հիվանդն ա-  
վելի շուտ խնամքի կարոտ ունի, քան դեղորայքի. յերբ  
հիվանդը լավ խնամք ունի, դեղորայքի կարիք չկա:  
Կարմրուկի դեմ, ինչպէս և շատ ուրիշ հիվանդութուն-  
ների դեմ հատուկ ճար չկա, հատուկ դեղ չկա:

Մեզանում մի վատ սովորութունն ել այն է, վոր  
յերբ մեկի տանը կա մի վորեւե հիվանդ, ամենքը դնում  
են տեսության և ամենքն ել խորհուրդներ են տալիս  
խնամքի և բժշկության համար: Յեթե կարիք կա  
բժշկության, պետք է դիմել բժշկին և վոչ թե լսել  
այս կամ այն պատահական խորհրդատվին. այդ տե-  
սակ խորհուրդները վնասակար են. յեթե վորեւե խոր-  
հուրդ մեկին ոգնում է, դա դեռ չի նշանակում, վոր  
խորհուրդը կամ դեղը կարող է ոգտակար լինել կարմ-  
րուկով բոլոր հիվանդների յել հավասարապէս. միայն  
բժիշկը կարող է վորոշել, թե ինչը կողնի հիվանդին  
և ինչպէս պետք է խնամել հիվանդին:



ԻՆՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՆԵՆԻ ԿԱՐՄՐՈՒԿԻՑ

Ընթերցողներէից շատերը հարց կուան, ինչպե՞ս թե պաշտպանվել կարմրուկից: այո, կարելի յե պաշտպանվել և պետք է պաշտպանվել. հասարակութեան մեջ սխալ կարծիք կա, թե՝ «ամենքն ել անպատճառ պետք է հիվանդանան կարմրուկով»: կա ևս մի սխալ կարծիք, վոր մեծ հասակում հիվանդացողն ավելի դժվար է տանում, քան մանուկ հասակում:

Պետք է հաստատուպես ջրել այդ յերկու կարծիքներն ել: Ամենեվին պարտադիր չե, կարմրուկով հիվանդանալը: Ճիշտ է, կարմրուկը շատ շուտ է կոչում և նրանից աղատվելը դժվար է, բայց և այնպես գիտութեամբ հերքել և և հաստատել, վոր պարտադիր չե կարմրուկով հիվանդանալը: Կան անձինք, վորոնք յերբեք չեն հիվանդացել կարմրուկով և գրանից վոչ մի վնաս չեն ստացել, բայց ողուտից: Չ կարծիքներն մասին ել ասել և իր խոսքը գիտութեամբ և հաստատել, վոր փոքրահասակ մանուկները, մանավանդ ծրծկեր յերևեսաների կարմրուկն անհամեմատ ծանր է ընթանում, քան 10 տարեկանից բարձր հասակ ունեցող յերևեսաներին. և դա շատ հասկանալի յե, վորքան փոքր է յերևեսան, այնքան զարգացած չեն նրա դիմադրական ուժերը, նրանց կաղմվածքը շատ է յենթակաարտաքին աշխարհի վնասակար աղբեցութեաններին, նրանց կաղմվածքի պաշտպանողական միջոցները տակալին թույլ են և այս բոլորի պատճառով նրանց կարմրուկն ընթանում է ավելի ծանր, նրանց կարմրուկն ավելի շուտ է տալիս բարդութեանները, քան 10 տարեկանից բարձր յերևեսաներին:

Իսկ ի՞նչ են անում մեզանում շատ մայրերը: Հենց վոր լսում են հարեւանի տանը կարմրուկ կա, շատ

պում են տանել նրա մոտ իրենց յերևեսաներին, վոր հիվանդանան և շուտ անցկացնեն հիվանդութեամբ: Այդ մայրերի կարծիքով, վորքան շուտ հիվանդանան յերևեսաները կարմրուկով, այնքան լավ. այդ բանն անում են ևս առավել այն գեպքում, յերբ կարմրուկը թեթեւ է ընթանում, կարծելով վոր, յերբ մի հիվանդի կարմրուկը թեթեւ տեսակի յե, իրենց յերեսայի կարմրուկն ևլ թեթեւ կանցնի, կամ ինչպես նրանք են ասում՝ «բարի» կլինի. բայց իհարկե շատ սխալվում են այդ տեսակ մայրերը: Յեթե մեկի մարմրուկը թեթեւ է, դա դեռ չի նշանակում, վոր նրանից վարակչողի կարմրուկն ևլ թեթեւ կանցնի:

Վերն արդէն ասացինք, վոր կարմրուկի ծանրութեամբ և բարդութեամբ կախում ունեն վոչ միայն հիվանդի վարակի ուժից, այլև վարակվածի կաղմվածքից, նրա կենցաղի պայմաններից: Այդ և պատճառը, վոր միևնույն տան մեջ կարմրուկով հիվանդացողները դրութեամբ միտեսակ չի լինում. միատեսակ չի լինում, վորովհետեւ նրանք միևնույն պայմաններում չեն ապրում. ուստի յերբ մեկի տանը կարմրուկով հիվանդ կա, ոլտի աշխատել այդ հիվանդից հեռու մընալ, հիվանդատես չզնալ: Պետք է մի կողմ թողնել այդ վնասակար սովորութեանը. հիվանդատեսը յերբեք չի ողնում հիվանդին, ընդհակառակը նա միշտ խանդարում է. բավական չե այդ, այլև տարածում է հիվանդութեանը մի տնից մյուսը և տալիս է առողջին:

Իսկ այն է, վոր հիվանդատեսը կարող է ինքն առողջ մնալ, բայց ուրիշին փոխանցել հիվանդութեանը: Այնպես վոր, հիվանդութեանը մի տնից մյուսը տանել կարող են վոչ միայն յերևեսաները, այլև մեծերը, վոր



բոնք յենթակա շեն վարակման: Հիվանդի մոտ թողնել  
առողջ յերեսաներին, դա միանգամայն հանցագործու-  
թյունն է, առավել ևս, յերբ կամենում են դիտմամբ  
վարակել նրանց: Պիտի աշխատել, վոր յերեսաները  
չհիվանդանան և վոչ թե նպաստեն նրանց հիվանդու-  
թյան և վարակի տարածման:

Հիվանդության տարածման տեսակետից նշանակու-  
թյուն ունի վոչ միայն հիվանդի հետ շփումը, այլև հի-  
վանդի գործածած իրերի: Կարմրուկն այնքան արագ և  
չուտ և կաշում, վոր կարելի չե վարակվել հիվանդի  
անկողնուց, գրքից, մատիտից, յերեսորբիւնից և այլ  
առարկաներից, վորոնց գործ է ածել հիվանդը կամ  
յնորոնք յեղել են հիվանդի սենյակում:

Հիվանդության տարածման առաջն առնելու հա-  
մար, մեծ նշանակութուն ունի, յերբ հիվանդը տնից  
դուրս է դալիս և դնում է ուսումնարան: Հայտնի չե,  
յնոր մանկական վարակիչ հիվանդությունների տարած-  
ման մեջ, մեծ դեր է խաղում դպրոցը: Շատ հիվանդ-  
ներ առանց կատարելապես առողջանալու, կամ դեռ  
վարակի վտանգը չանցած, դարձն են դնում և վարա-  
կում իրենց ընկերներին: Չպետք է մոռանալ, վոր կար-  
ժըրուկը վարակիչ է և այն ժամանակ, յերբ դեռևիս  
վոչ մի նշան չկա հիվանդի վրա:

Յերբ մի տան մեջ կարմրուկով հիվանդ կա, մնա-  
ցած առողջ յերեսաներին պետք է առանձնացնել և  
միայն մի քանի օր անցնելուց հետո. կարող են դնալ  
դպրոց, յերբ հայտնի կ'իլի, վոր նրանք վարակված  
չեն:

Հիվանդ յերեսան կարող է տնից դուրս գալ և դրս-  
քոց գնալ տաքությունն իջնելուց 7-10 օր անցնելուց  
հետո, յերբ չկա թեփի վոչ մի նշան. այն ինչ, մեղա-


նում հիվանդները դպրոց են հաճախում հենց վոր նրանց  
տաքությունը իջնում է: Անշուշտ, այստեղ հիվանդ-  
ները չեն հանցավոր, այլ նրանց ծնողները:

Յերբ մի տան մեջ կա կարմրուկով հիվանդ և նա  
առանձնացած չե, այդ տան մեջ դռնվող հասակավոր-  
ները նույնպես շփում չալիտի ունենան ուրիշ յերեսա-  
ների հետ, վորպեսզի հիվանդությունը չտարածեն և  
չվարակեն առողջներին:

Կարմրուկով հիվանդի սենյակը լուրջ ախտահան-  
ման կարիք չունի. կարմրուկը չի պահանջում այնպիսի  
մանրակրկիտ ու լուրջ ախտահանություն, վորպեսին  
կարիք ունի քութեչը, քանի վոր, ինչպես վերը հիշե-  
ցինք կարմրուկի մանրեն շատ շուտ վոչնչանում է ա-  
րեզակի լույսից. բավական է սենյակն ողավորել 2-3  
օր և կարմրուկի վտանգն անցած կլինի. բայց և այն-  
պես հիվանդի սենյակում գտնվող և հիվանդի դուր-  
ծածած առարկաները, վորոնք կարելի չե վանալ,  
պետք է լավ լվանալ. որինակ՝ սպիտակեղենը, անկողի-  
նը, և այլն. իսկ ինչ չի կարելի լվանալ, հարկավոր է  
արեվի տակ մի քանի ժամ պահել:

Յերբ կարմրուկը շատ մեծ չափերի չե հասնում,  
աշխատավորության համար պիտի բացել հատուկ հի-  
վանդանոցներ, հիվանդ յերեսաներին առանձնացնելու  
և բժշկելու համար. հատկապես այն յերեսաների, վո-  
րոնք հարավորություն չունեն տանը բժշկվելու և  
խնամվելու:

Նախագրուչական միջոցներից մեկն էլ դպրոցների  
ժամանակավոր վարակիչները կարմրուկի ուժեղ հա-  
մաճարակ կա, քանի վոր այստեղ մեծ է աշակերտների  
կուտակումը վարակի տարածման տեսակետից, խիստ  
վտանգ է ներկայացնում:



14260-57 17



Այստեղ ավելորդ ենք համարում մի առ մի թվել այն բոլոր առողջապահական պահանջները, վորոնց կիրառելն անհրաժեշտ է ամեն տեսակի վարակիչ հիվանդութիւններէ վարակի առաջն առնելու համար: Այստեղ պիտի միայն շեշտենք, վոր ավելի հեշտ է վարակիչ հիվանդութիւննից պաշտպանվելը, քան թէ նրանից բժշկվելը:

Պաշտպանեցեք յերեւոյններն կարմրուկից և ամեն տեսակի վարակիչ հիվանդութիւններից. այդ է պահանջում մանկան առողջութիւնը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է կարմրուկը . . . . .	3
2. Ի՞նչ նշաններ ունի կարմրուկը . . . . .	4
3. Վորո՞նք են կարմրուկի բարդութիւնները . . . . .	6
4. Հիվանդի խնամքը . . . . .	10
5. Ի՞նչպէս պաշտպանվել կարմրուկից . . . . .	14



« Ազգային գրադարան

NL0273849



7133

ԳԻՆԸ 10 Կ.



Д-р А. МЕЛИКЯН

КОРЬ

Издание НКЗ ССР Армении

1 ★ 9 ★ 3 ★

616.9  
У-45